



## 7. ԾԱՅՐԱԶ ՄԵԼԻՔՅ

Ժամանակով մարթըմ կեր, ենոր անուն Շահրազ Մելիքյ էր: Շատ հարուստ մարթ էր: Մեկ կընիկ ուներ, ենոր տըղա չըկեր: Ինքն փափաք էր՝ մեկ տըղա էլներ ուր:

Եփ տըղա չեղավ, ուր կընգան ասաց. - Արի՛ էրբանքյ Եճմիածին, աղոր էնենքյ, Աստված մե մեկ տըղա տա:

Գացին Եճմիածին, խընթրեցին, օր Աստված էնոնց տըղե՞ն տա: Նեվարման գնիս, օր ժամեն կէլին, Շահրազ Մելիքյի կընիկ մեկ խորոտ հեթինըմ տեսավ ժամու տիտու: Շատ ուզեց էտա տըղեն, են էլ տասվերկու տարեկան էր: Ենու սըռտի մեջ ասաց. «Կը խընթրեն Աստծուց, ինչքան ես էսա տըղեն սիրեցի, Շահրազ Մելիքյն էլ իմ պես սիրա, օր տանեն, էնեմ ծի խոգազավակ: Կարելի յա, օր ես էկա ըստա ուխտի խամար, օր ծի տըղա եղեր, Աստված էսա տըղեն էտու ծի»:

Մընաց չուր հիրիկուն, Շահրազ Մելիքյ էկավ ուր հօդեն, կընիկ ասաց. - Շահրազ Մելիքյ, Աստված մեկ տըղեն մ'ա տըվե մե, ես շատ սիրեցի, տուն էլ տե՛ս, խի՛ տը սիրե՞ս, թի՞ չէ:

Շահրազ Մելիքյ տըղեն օր տեսավ, խընդ կընիկ շատ սիրեց:

Տըղին խարցուց. - Դու ո՞ր տեղացի իս: Խեր ունի՞ս, մեր ունի՞ս, պարեկամ ունի՞ս:

Ասաց. - Չէ: Ես գինքյ էսա տեղն իմ տեսի:

Ասաց. - Ի՞նչըի քյե էսա տեղն իս տեսե:

Ասաց. - Ես ութ տարեկան, պարսիկի խողի միծից եփ օր գախթըվանքյ, ինծի խետ ա պերած: Թալած ան էսա տեղ, որի

անընով զգծի կը պախւեն:

Ասաց. - Լավ կեղի, տըղա՛, քჩւ անուն ի՞նչ ա:

Ասաց. - Իմ անուն Աղավան ա:

Չահրազ Մելիքյ տըղին ասաց. - Թե քյե շատ ուզեցի, իմ կը միկ խընդ ծի հավելի ըզբյե կուրզա: Օր մենք քյե տանինքյ, մե տըղա էնենքյ, տիւ տը գա՞ս, եղիս մի տըղա, թի՞ չէ: Ես էլ շատ հարուստ եմ, իմ մալ կը մընա քյե, կը տեսնաս՝ իմ ծերութինի ժամանակն ա: Էնքան օր եղիս ծի հիշատակ:

Ասաց. - Լավ կեղի, ես չըխո շատ կուզեմ, օր ծի խեր մ'եղի ու մեր մ'եղի: Ես ամլա խեղճ ու շիվար չըմնամ:

Ասաց. - Չա՛տ աղեկ, վաղ չէ մեկէլ օր ճամբախ կելինքյ, էր-քանքյ մեր տուն: Քյե կը տանիմ խետ:

Եկան էնոնց տուն: Գյեղացիքյ հըմեն գանցին հառեծ, թե՝ Չահրազ Մելիքյ, տիւ գացիր ինչ խընթելու, օրշնյալ Աստված, քյե տըղե մ'ետու, առիր, պերիր խետ:

Են էլ գոհացավ Աստծուց, ասաց. - Աստված ծի էտուր:

Խինգ-վեց տարի մ'ատեն գյընաց, տըղեն եղավ տասնեվուր տարեկան: Գարուն օր պանցվակ, էնոնց գառ կեր, գառ կը տաներ, կարծեր: Էնոնց գյեղ թաղըմ քիւրտ էր, մեկ էլ խայ էր: Գյեղի մեջ աղե՛մ կեր, անուն Դավրեշ աղա յեր: Դավրեշ աղին ախչիկըմ կեր, տասնուիխինգ տարեկան էր, անուն Փարիշան:

Ենի ու Աղավան գառներ կը խառնեն հիրար, կը տանեն, կարծեն: Տըղեն պառկավ, քյընավ, ախչիկ հիշար մընաց, օր գառներ չըկուրուսեն:

Տեսավ ախչիկ, օր տըղի պերնից էսպես շողի պես պա՛մ կէլեր, կը մըտեր ներս:

Տըղեն հիշարցավ, ախչիկ ասաց. - Աղավան, օր տիւ քյընար, շողի պես պա՛մ կէլեր, կը մըտեր քիւ պերան, էնի ի՞նչ էր:

Ասաց. - Մենք մըկըրտսկեր ենքյ ավազանի մեջ, էնի մեր օրենքյի, մեր մեռոնի շընորքյն ա:

Ասաց. - Ապա հե՞ր ծի չըկա:

Ասաց. - Տիւ քիւրտ ես, ծե մըկըրտութեն չըկա, տիւր ան-մեռոն եքյ:

Ախչիկ ասաց. - Աղավան, արի՛ ծի ա՛ռ, տա՛ր մըկըրտա՛, էտա լիս ես էլ տեսիմ:

Ասելուն խետ Աստված տըղի խելքյ փոխեց, ախչիկ, տըղեն զիրար սիրեցին:

Ախչիկ տըղին ասաց. - Իմ խեր աղայա, օր հիմնա, քյիկ էլ, ծիկ էլ, քիւ խերն էլ կը սպանա, տըներն էլ կը վառա:

Մընաց չուր էն մեկւլ եօր: Գառներ տարան, կարծան, տեսավ օր երեցըն էնդեխեն կը գյեր:

Աղավան ասաց. - Փարիշա՞ն, տերտեր գի կը գա, ես երթան զեն պերեմ էսա տեղ, օր քյե մըկըրտա, մարթ ընհիմնա:

Աղավան վաճեց, գըյընաց տերտըրոչ հանեն, ասաց. - Տե՛ր հայր, ես քյե պա՞մ տ'ասեմ, համա չեղի՝ տու հուրիշներուն ասես:

Ասաց. - Չէ, տըղա՞, ես տերտեր իմ, օր ծի խոստովանքյ եղի, ես մարթիւ քըսա չըն էներ: Իրավունքյ չունիմ, օր ասեմ:

Ասաց. - Ես ու Դավրեշ աղի ախչիկ հիրար շատ կուզենքյ, մենք հիրար տ'առնինքյ, կը խընթրիմ, օր տու գաս, էնի մըկըրտիս, օր մեկ մարթըն չիմանա:

Տերտեր ասաց. - Զավակս, Դավրեշ աղեն օր հիմնա, ընծի յէլ կը սպանա, քյե յէլ, քիւ խերն էլ կը սպանա:

Ասաց. - Չեղի, տերտե՞ր, ուզես, չուզես, տը գաս:

Ասաց. - Ո՞նչ մասրուփ կա խընդ ծի, ո՞նչ մեռոնի շիշ, վաղ առավոտուն կարիմ, կը գամ, մըկըրտութեն կէնեմ:

Գառներ պերին գյեղ, չուր առավոտուն, առավոտ շոտ տերտեր էլավ, էկավ: Ախչիկ եպեր հախազըրի մոտ, չոլխըցուց, մեռոն թափեց վերեն, օր տը մըկըրտա:

Տերտեր ասաց. - Քավոր չըկա, առանց քավորի մըկըրտութեն չեղի:

Տեսան, օր սարից մեկ մարթըն գյուլիսովեր կը գա խընդ էնոնքյ: Տերտեր, էնոնքյ վախեցան, ասին թի քիւրտ ա: Եկավ, տեսան, օր մեկ ճոչ մարթըն, օր տաս մարթիւ գյորան կըղուվաթ ուներ:

Ասաց. - Տերտե՞ր, տու ետի ի՞նչ ա ըստան կէնեք:

Ասաց. - Պա՞մ չընքյ էնի:

Ասաց. - Չի տ'ասեք, թի չէ ծի իրեքյն էլ ըստան կը սպանեմ:

Տերտեր չասաց, Աղավան ասաց, ասաց. - Ես Դավրեշ աղի ախչըկեն կը սիրեմ, տերտեր զիրով պերեր եմ, օր կընքան, օր աղիմ: Մըկա քավոր չըկա:

Ետա փայլեվանի անուն Արագատ եր, ասաց. - Ես Աջման

Ծահի փայլեվան եմ, եկեր եմ էսա կողմեր կան կը գամ՝ խի ի՞նչ կա, ի՞նչ չըկա: Օր ծի տեսա, էկա, մըկա ես ծե քավոր կեղիմ:

Փայլեվան Արազատ եղավ քավոր: Ախչիկ մըկըրտեցին, տերտեր ուր գյեղ գյընաց, Արազատն էլ սար գյընաց: Աղավան, ախչիկ մընացին չուր հիրիկուն, գանձներ տարան տուն: Ըսկի մարթըն չիմցավ էն մըկըրտուրեն:

Են մեկել եօր գառներ առան տրդեն ու ախչիկ, էմել տարան, կարծան: Աղավան պառկավ քյընավ, ախչիկն էլ էնու կուշտ քյընավ: Ախչիկ տեսավ՝ Աղավանի պերնի էտա շող պերնեն կէլեր, կը մըտեր ուր պերան, ուր պերնից կէլեր, կը մըտեր Աղավանի պերան:

Ասաց. «Օրշնյա՛լ Աստված, մեկ էլ էսա լհւս տեսա, թըխ մեռնիմ»:

Երկու տարի էտպես ընցավ: Մեկ Մահմուդ աղա տաճիկըն էկավ Դավթեց աղի մոտ, օր էնոր ախչիկ ուզա ուր լամկուն:

Ուզեց ու պայման կըտրեց, օր երկու ամիս նորեն գա տանի, օր էնոր ջրհեզ էնենքյ, խալավ-խագիւստ էնենքյ, թաղարիք հըմեն էնենքյ:

Ասաց. - Լավ կէղի, էնոր նադր կըտրա՛, փարեն տամ, երկու սորա կը գամ, իմ խարս կառիմ, կերթամ:

Աղավան չըհիմցավ, են մեկել եօր ախչիկ գյընաց, Աղավան տեսավ, ասաց. - Զի ուզած ան, դիրիս ծի ճամբախըն կընդի: Օր ծի ճամբախ չըկընդիս, ծի պանցըր տեղից կը թալիմ տակ, կը մեռիմ, էտա լհւս չը՛ իտա, խավար չը՛ առի:

Տըղեն ասաց էնոր. - Ես, իմ խեր մեր ոոց գառներ կը տանինք քաղաքյ, ծախսենք: Տանմամ, գամ, քյե մեկ ճարըն կէնեն:

Են մեկել եօր Ծահրազ Մելիքյ առավ գառներ ու ըզտըղեն, տարավ քաղաքյ, օր ծախս:

Իրեք ավուր ճամբախ գատն ա: Գառներ ծախսեցին, Ծահրազ Մելիքյ գյընաց, օր փարա տ'առնի, քաղաքյի մեջ Աղավան կուրուսավ: Ծահրազ Մելիքյ էնքան կան էկավ, տրդեն չըկընդավ, էրող, գյընաց:

Ասաց թե՝ տրդեն տուն ա գացե:

Գյընաց տուն, կընգան խարցնեց, ասաց. - Կընիկ, Աղավան չէկե՞:

Ասաց. - Չէ: Չեղի՞ տըղին պա մ'ա եղե, սպանած ան, խի-վընդութե մ'ա եղե:

Մելիքյ ասաց. - Չէ, իս գացի փարեն առա, տըղեն իմ վերեն կուրուսավ:

Ենոնքյ սկսեցին տըղի խամար լաց: Աղավան կը մընա քաղ-քի մեջ, տեղըմ չը կընդի, օր պառկի: Մութըն կը տա վերեն, կը կըծկի սարի՞ն պատի տակ: Ետա շենքյ Շահի ախաֆիր նստած տուն ա: Շահի ախաֆիր կընիկ օր կէլի, տիւս կերթա, կը տեսի՝ մեկ տըղե՞ն գի կըծկե պատի տակ:

Կը խարցուցա, կասա. - Դիւ ի՞նչ տըղա ես, օր էսա տեղն ես մընացե:

Աղավան կասա. - Ես կարիք եմ, տուն-տեղ չըկընդա, ես էլ էկա, կըծկա էսա պատի տակ:

Շահի ախաֆիր կընիկ տըղին կարի, կը տանի ներս: Խաց կը կերցուցա, չայ կը խընցուցա: Ու կը խարցնա, թե՝ ո՞ր տեղացի ես, քիւ զընս հի՞ւստ ա, ո՞ր տեղեն էկար: Քիւ անուն ի՞նչ ա:

Աղավան կասա. - Ես որփ եմ, իմ անուն Աղավան ա: Շահ-քազ Մելիքյ ձի տարեր ա, երե ուր տըղա, կը պախա: Գաններ պերինքյ ըստա, ծախեցինքյ, իմ խեր իմ վերեն կուրուսավ, մըկա ես տիւս եմ մընացեր:

Շահի ախաֆիր կընիկ կը շփոթվի Աղավանի անունից:

Կէլի, լալով կը փարութվի Աղավանի վիզ, տըղեն կը զար-մանա, կասա. - Էսա ի՞նչ ա, էսա կընիկ իմ երլսներ կը պագա, կը փաթութվի իմ վիզ:

Կընիկ կասա. - Մը՝ զարմանա, դիւ իմ ախաֆիր տըղեն ես: Գախթելու ժամանակ Շահի ախաբեր իմ խորոտկութնի խամար գհրավեն էպեր ուր խամար:

Մընաց չուր հիրիկուն, Շահի ախաբեր էկավ տուն, ասաց. - Կընիկ, էսա ի՞նչ տըղա յա՝ էսա տեղ նըստեր ա:

Ասաց. - Իմ ախաֆիր տըղեն ա, իմ ազքից մարթ չըմընացե, մենակ էնին ա մնացե: Խի ի՞նչ տ'էնես, ի՞նչըխ տը պախես, թի՞ տը մըլես տիւս:

Շահի ախաբեր ասաց. - Կընիկ, քիւ խաթրի խամար ի՞նչըխ ուզես, էնպես կէնեմ:

Ասաց. - Իմ ախաֆիր տըղեն հալա ճիժ ա, ճամբխա՛ թըխ ժի խեծնել սորվի:

Աղավանի խալվըներ փոխեցին, ճամբխեցին ժիերու մեջ:  
Լավ ծի խեծնիլ սորվավ քանի մ'ավուր մեց:

Չուր ծի խեծնել սորվավ, ամիսըն ընցավ, մընաց մեկ ամիս,  
օր ախչիկ տը տանեն:

Շիրիկուն օր Աղավան քյընավ, ա՞յս քաշեց:

Խորքհւր ասաց. - Տըղա՛, անոթի՞ կը մընաս, թի՞ ծարավ, օր  
ախ կը քաշես: Ինչ ուզես, ես էնի քյեզի կը տամ, ինչ գոռծ օր  
ուզես, քյե էն գոռծին կը ճամբխեմ:

Աղավան ասաց. - Չէ՛, խորքհւր, իմ ցավ պաշխա պան ա:

Խորքհւր ասաց. - Քիւ ցավ ծի ասա՛, թե ի՞նչ ա, քիւ ցավին  
մեկ ճար մ' էնեմ:

Աղավան ասաց. - Ես ու Դավրեշ աղի ախչիկ հիրարու շատ  
կուզենքյ, հիրար տ'առնինքյ, մըկա չաճողվի, մարթ էլ չըկա, օր  
ընծի խամար պերի, եսոր խամար այս կէնեմ:

Խորքհւր ասաց. - Աղավան, տիւ խայ ես, էնի քաւրտ ա,  
ի՞նչըխ տիւ էնի տ'առնես, էնու խեր քյե կը սպանա:

Ասաց Աղավան. - Էղի, չեղի, ես էնի տ'առնեմ:

Խորքհւր շիվարած մնաց:

Ասաց. - Օր էնպես ա, ես ճամխեմ, Արազատ փայլեվան  
պերիմ, տընիմ խընդ քյե, գյընձ քի խոր տուն, օր ախչիկ առնես,  
պերես:

Ճամխեց, Արազատ փայլեվան էկավ, ասաց. - Շահի՛ կին,  
տիւ ընչի՞ խամար ես ծիկ ուզե:

Շահի կին ասաց, թե՛ իմ ախպիր տըղի խետ պիտի երթան  
էնոնց գյեղ, օր ճամխըներ զարարըն չըլնի իմ ախպիր լաճուն:

Ասաց. - Պե՛ ախպիր լաճ, տանիմ:

Փայլեվան Արազատ օր ախպիր տըղեն տեսավ, շատ խըն-  
դացավ:

Ասաց. - Թե էսի Աղավան ա, ես էնոր քավոր եմ եղե սարի  
մեչ:

Շահի ախպըրկին ասաց. - Տիւ ի՞նչըխ էնոր քավոր ես եղե:

Ասաց. - Եփ ես գացի կան գալու էն երկիրներ Շահի ամրով,  
սարի մեչ տեսա, օր մեկ տերտերըն, մեկ տըղե՛մ, մե ախչիկըն էն  
տեղ կայնած են: Են տեղն էլ քանի՛ն խատ էլ գան կարծին: Գացի,  
անոնց խաղողնեցի, թե տիւ ի՞նչ մարթ եք, ի՞նչ կէնեքյ եսա տեղ: Տերտեր պա՛մ չասաց, ախչիկն էլ ծեն չէխան, Աղավան ասաց. «Ես

Էսա ախչըկեն շատ կը սիրեմ, տ'առեմ: Տերտեր պերեր եմ, օր մըկըրտա, մըկա քավոր ջըկա»: Ես եղա էնոր քավոր: Դիմա ես շատ ուրախ եմ, օր տղղեն առնեմ, տանեմ ուր գյեղ:

Շահի ախպար կին վախեցավ, ասաց. - Իմ ախպար տըղին պիտի ըսպանեն, օր քյըրտիւ ախչիկ խայացուցե, պիտի առնի:

Արազատ փայլեվան ասաց. - Դե՛, էն էլ տի՛ւք մտածեք:

Շահի ախպըրկին ասաց. - Աղավան, էտպես մ'էնե, օր Շահ իմնա, քյիկ էլ, ախչիկն էլ կը սպանի:

Ասաց. - Խորքիւր, չեղի, ես ախչըկեն խոսք տըվեր եմ, էնոր ժամանակ ամիս կես ընցեր ա, մընացեր կես ամիս, օր կը տանեն, ես պիտի էրթամ խասեմ, քանի չըն տարած:

Ելան, Արազատ մեկ ծի խեծավ, Աղավան էլ մեկ ծի խեծավ, էկան, գացին էնոնց գյեղ: Չում գացին էնոնց գյեղ, խելին էկեր էր, Դավիթշ աղի ախչիկ կուզեր օր տաներ:

Ախչիկ Աղավանին կաչկեր, կասեր. «Զէկավ, ծի խապեց, թողեց էսա կրակի մեչ»:

Դիրիկվան Աղավան, Արազատ խընորաց գացին, խասան գյեղ:

Մեկ ախչկան ասաց, թե՝ Աղավան էկավ:

Ախչիկ ուրախացավ, էլավ տիւս, Աղավանին տեսավ:

Ասաց. - Խելին էկեր, ծի կը տանի, տիւ ի՞նչ կը մըտածես, տիւ ո՞ր տեղն էր կուրիսն չում մըկա:

Աղավան ախչըկեն ասաց. - Պատրաստվի՛, առավոտ քյեզ կը տանիմ: Յան քյե կազատենք, յան մի երկըսիս էլ կը սպանեն: Արազատ՝ մեր քավոր, մեր խետն ա, թի էնի մի ազատա էսա խելից, էսա խարիր հիսուն ծիավորից:

Ախչիկ ուր պատրաստութուն տեսավ, առավոտուն շոտ Աղավան, Արազատ էնոնց ծիանքյ պատրաստած ան, օր ախչիկ փախուցեն:

Ախչիկ տեսնալուն պես իրենց ծիանքյ խեծան:

Արազատ փայլեվան ախչիկ առավ էնու ծիու թարք:

Քըշեցին: Քըշելու ժամանակ գյեղի կողքին մեկ քհւրտըմ էնոնց տեսավ, ճանչըցավ, թե էսի Դավիթշ աղի ախչիկն ա, օր փախուցին, տարան:

Ախչըկեն կանչեց, ասաց. - Դժ՞ր կերթաս էտա խայերու խետ, քիւ խելին էկեր ա, քյեզ կը տանի:

Շուտ քիւրտ գյընաց, լուր էտու ախչըկե խոր՝ Դավրեշ աղին, օր Շահրազ Մելիքյի լած Աղավան, մեկել չընանջըցա, քև ախչիկ փախուցին, տարան: Խելին էկեր ա, քյեզ ամոր ի:

Դավրեշ աղան հերսոտավ ու էլավ խելուն ու խոլամներուն ասաց. - Ելեթյ խեծնենքյ, ինենքյ էնոնց հիտև:

Խեծան, էնոնց հիտև ընգան իրեթյ խարիր մարթ: Ծիեր քըշեցին, մեկ սահաթից էնոնց խասան:

Աղավան էտ տեղ հիտուց պըշկավ, տեսավ օր ծիանքյներու թող էրեվաց, չերեվաց, էնոնց մոտիսըցան:

Ասաց. - Արազատ, մեզի խասան, ի՞նչ էնենքյ, ծիկ էլ կը սպանեն, ախչըկեն էլ, քյեզ էլ:

Արազատ փայլեվան ասաց. - Թըղ գան, էնոնքյ իմ անուն չըլսած, հիմա ես էնոնց խետ կը խոսիմ:

Արազատ ծիուց էճավ տակ, ծիու յուլար էտուր Աղավանին ծեռ, կանչեց քիւրտերուն:

Ասաց. - Մի՛ գաք, մեղյը եթյ, ե՛տ տանցեթյ: Ախչիկ, տըղեն զիրար կը սիրեն, էնու խամար կը տանիմ: Թե օր չէ, ետ չեթյ տառնա, ես Շահի փայլեվան Արազատն եմ, օր կըովու մեչ մտա, ծե հըմեն կը սպանեմ:

Դավրեշ աղեն քյըրտերուն ասաց. - Մեկ խայու տըղա յա, կուզի մե էսա իրեթյ խարիր մարթիւն վախցուցելով ետ տա:

Կըոթկ բաշլեց: Աղավան չի կանա կըովի, Արազ փայլեվան միքա կը կըովի: Չուր ճաշու ժամանակ հիսուն մարթ ըսպանեց:

Դավրեշ աղեն վեր ուր փոշպընավ, ասաց. - Մեզնից հիսուն մարթ ըսպանեց, մենքյ չըկարցանքյ էնու պա՛մ էնել, թե չուր հիրիկվան կըովենքյ, հիսուն-վարսուն մ'էլ կը կոտորա, Փայդա չեներ, տառնանքյ, էրթանքյ մեր տուն:

Տառցան, գացին ուրենց տուն: Էնպես մալուլ, փիս-փիս գացին փեսի տուն:

Դավրեշ աղեն տառցավ, գյընաց Շահրազ Մելիքի տան տհւու կանավ, ասաց. - Մելիքյին կանչեթյ, թի գա:

Մելիքյին կանչեցին, ասին. - Տհ՛ւա արի, Դավրեշ աղեն քյե կը կանչի:

Շահրազ Մելիքյ ուր կընգան ասաց. - Օր ծի կանչա, տանի տհւու, ծի. տը սպանա: Էսա ի՞նչ բալա եր՝ մի խամար գյընեցինքյ,

գացինք ևսա խոզազավակ պերեցինք, ևսա պատիճն իպե մեր գյըլիս:

Կընիկ ասաց. - Աստված օղորմած, պան չըկա, գյընա՛ մեկ խենք ի՞նչ կասա, ի՞նչ չասա:

Եփ Շահրազ Մելիքյ էլավ տիւս, գյընաց Դավրեշ աղին մեկ փարե մ'եթալ:

Ասաց. - Զի ի՞նչ ես կանչե, աղա՛:

Ասաց. - Քյաֆը՛ր, տիւ չը՞ս գյինա քյե ընչի խամար եմ կանչե: Քիւ տըղեն իմ ախչիկ փախցուցե, տարե:

Շահրազ Մելիքյ ասաց. - Դավրե՛շ աղա, ես ի՞նչ ենեմ, են իմ տըղեն չեր, մեկ հերիմ էր, ես պիրեցի, տերեցի, ես ի՞նչ մեղավոր եմ, թի էն քի ախչիկ փախցուցե: Մեղավոր տըղեն ա, գյընա՛ հետեվեն, պըռնա՛, ըսպանա՛:

Ասաց. - Գացի, հիսուն մարթ էլ վերա տըվի: Խետ մեկ մարթըմ կեր, չըճանչըցա ո՞րն էր, կասեր թե՝ ես նշմու Շահի փայլեվան եմ: Ես ետ տառցա, էնոնք գացին:

Շահրազ Մելիքյ ասաց. - Ապա ի՞նչ կուզես, աղա՛:

Աղեն ասաց. - Խեծի՛ քիւ ծին, խընդրաց երթանքյ, բալքի քիւ խոսքով իմ ախչիկ ետ տառցուցենք:

Շահրազ Մելիքյ ասաց. - Լավ կեղի:

Էլան, խեծան, գացին: Գացին կան էկան, էնոնց չըտեսան, չըգյիտցան դիր վեր են գացած:

Էնոնքյ թըխ ախչըկե հիտև կան գան, մենք տառնանքյ Աղավանի, Արազատի վերեն, խենքյ՝ որ տեղ վեր գացին:

Աղավան, Արազատ առան ախչիկ, գացին չուր սարի՛մ տակ, չիմա՛մ կեր դա, հախայիւրըմ, ծիանքյ թողին արածալ, ուրենքյ խաց կերան, ճիւր խըման, խանգըստան, պառկան:

Են սարի մեչ քառոսուն գերակ կը մընան:

Եսա գերակներ Աղավանին ու Արազատին օր տեսան՝ պառկած են հախայըրի վրեն, ասին. - Մենքյ եսա տեղ էսքան թալան-թուրան էրեր ենքյ, եսա ճամխըներ կըտըրվեր ա, մարթ չերթա, չի գա, եսա մարթեր ի՞նչ մարթ են, օր էկած են եսա տեղ, որհաք պառկած ան: Յան էսոնքյ խալիմ են, յան շատ կըտրիծ են:

Զերակ-բաշին ասաց. - Իմ դիւլքին պերե՛ք, ես նայեմ, խի եսա ի՞նչ մարթ են:

Դիւլբով իշկեց, ճանչըցավ, օր Արազատ՝ Աջմա Շահի փայլեվան էր:

Ընգերներուն ասաց. - Եսի Աջմու Շահի փայլեվան ա, ենոր խամար անվախ պառկած ա: Մե տանք ետ, պաղկըվենք, օր չիմանա, էլնի մե ըսպանա:

Գացին, սարի մեջ պաղկըվան: Արազատ չիմացավ: Քյընուց իլան վեր, էնոնց ծիանք պատրաստեցին, խեծան: Գացին խորքիւրոչ տուն՝ Շահի ախափիր կընգան մոտ:

Են ժամանակ Շահի ախափիր կին տեսավ, օր Աղավան ու Արազատ առին ախչիկ, էկան կանան տիւր:

Շոտ գյըննաց, առավ Աղավան ու ախչիկ, էկավ տուն, ախչիկ տարավ մեկ հոդի մեջ պախեց, օր Շահի ախափեր չըգան, չըտեսնի, չուր միճոցըմ կընտի:

Մընաց չում իիրիկուն, Շահի ախափեր էկավ տուն:

Կընգան ասաց. - Քհւ ախափիր լած էսա եղավ յոթ, տաս էօ կուրուսե, ո՞ր տեղն էր գացե:

Կընիկ ասաց. - Էնու խորք խերըմ կոր, գացեր էր էնոր տեսելու, էկավ:

Ասաց. - Են տեր ի՞նչ կեր, ի՞նչ չըկեր, ի՞նչ բասըմ կեր:

Կընիկ ասաց. - Շահի ախափեր, ես, տիւ իրիկ, կընիկ ենք, քյե մեկ պահմ տասեմ, թե իմ խոսքով չենես, յան ծի չըվընից կախեմ, յան պանցը տեղեն ծի տր թալեմ տակ, մեռիմ:

Ասաց. - Կընիկ, ասա, խեմ՝ ի՞նչ խընթիր ա:

Կընիկ ասաց. - Իմ ախափիր լած Դավրեշ աղի ախչիկ սիրեր ա, էսա քանի մ'օր օր գացեր էր, գյըննաց, ախչիկն ա փախուցեր, պերեր, խենք տիւ ի՞նչ կասես:

Ասաց. - Կընիկ, թե Շահ իմնա, լածն էլ, ախչիկն էլ կը սպան: Մեր օրենքի մեջ չըկա, օր խայու տըղա քյըրտիւ ախչիկ խայացուցա, փախցուցա: Ետի շատ գիշ պան ա:

Կընիկ ասաց. - Գի պերեր ա, Աստղօն խաթըր, մեկ ախափիր տըղա ունիմ իմ ցեղական, էլ տիւ գյինաս:

Շահի ախափիր իիրիկուն Շահին ասաց. - Իմ կընգան ախափիր տըղեն՝ Աղավան, Դավրեշ աղի ախչիկ փախցուցե, պերե: Խի տիւ ի՞նչ կասես:

Ասաց. - Տըղի վիզն էլ, ախչըկեն էլ ջալատի պիտի տամ կըտրել: Ետի մեր օրենքյին հակառակ ա:

Շահի ախաքեր խընթրեց Շահից. - Մեկ ճամբախըմ կընտընես, էտոնց վըգքեր չըկըղրես, իմ կընգան ցեղականից մեկ էտա տըղեն ա մընացեր: Օր տըղի վիզ կըտրես, իմ կընիկ յան ուր կը խեխստի, յան մեջտեղից տակ կը թալա, իմ էրկու ճըժեր հեթիմ կը մընամ:

Շահ ասաց ախապէր. - ճամխա՛, լաճ, ախչիկ պէ՛, քննենք, թե ի՞նչ պատճառով ա ախչիկ խայացեր, ի՞նչ պատճառով ա փախսեր:

ճամխեց, լաճ, ախչիկ առավ, էկավ:

Լաճուն խառցուց, թե՝ ախչիկ ընչի՛ պերեցիր:

Ասաց. - Ախչիկ ծի սիրեց, ծի փափաքավ, ես էլ պերի:

Ախչըկեն խառցուց, ասաց. - Քյե զիօռ՞վ ա պերե, թե՞ տու քիւ կամքով ես խայացե:

Ախչիկ ասաց. - Զի զիօռով չըպերե, ես իմ կամքով եմ խայացե:

Շահ ասաց. - Տհւ ընչի՛ն թըմախս էրիր: Մալին էրիր, ոսկուն էրիր, ընչի՛ն թըմախս էրիր:

Ասաց. - Նա՛ մալին եմ թըմախս էրեր, նա՛ ոսկուն. ես, տըղան խընդրաց գառ կարծենքյ, տըղան եփ օր քյընավ, քյընելու մեջ ես տեսա՝ շողի պես լիւ պա՛մ կէլներ ու կը նըտեր էնու պերան վեր: Ես էնի օր տեսա, տըղեն օր հիշարցավ, ես խառցընեցի, ասի. «Աղավան, են, օր տու քյընար, ենի ի՞նչ էր՝ լիւսկւ պես կէլներ ու կը նըտեր քիւ պերան»: Տըղեն ծի ասաց. «Մենք ավազանի մեչ մըկըրտվեր ենքյ, էտի մեռոնի շընորքյն ա, կէլի, կը նըտի իմ պերան»: Ես էլ էտա լիւսկւ խամար տըղին սիրեցի, խայացա ու առա:

Շահն ասաց. - Շա՛տ լավ, մենք ճամխենքյ, էրկու վարթապետ, էրկու խատ տերտեր պերենք էստեղ, օր ծեր օրենքյ շատ լավ օրենքյ ա, ծե էսա գյետի մեչ թող փըսակեն: Թե ծեր օրենքյ շատ զորութենով ի, ճհւր պիտի դաղրի, չուր ծեր փըսակ էղի, եթե ճհւր դաղրավ, ծեր փըսակ էրին, տու ազատ եքյ, եթե չըդաղրավ, ծեր էրկըսվի վիզ և էրկու քահանային ու վարթապետին պիտի կըտրեմ:

Շահ հհրիխսկեց, էրկու տերտեր, էրկու վարթապետ էպի:

Վարթապետին, տերտըրոչ ասաց. - Մեկ խայու տըղե՛ն քյըրտիւ ախչիկ փախցուցե, պերե, էտոնց փըսակ տ'էնեքյ էտա

գյետի մեջ, եթե ճհկը դադրավ չում էնոնց փըսակ եղավ, արդեն  
տիւ հըմեն էլ ազատ եք, օր չէ՝ ճհկը չըդադրավ, ծեր՝ քահանա-  
ներուն ու վարթապետներուն վիզ կը կըտրեմ, օր չեղի սովո-  
րութեն:

Տերտըրնիր, վարթապըտնիր շատ վախեցան էնոնց ջանից:  
Թե էսա ճհկը խընծ Արագ շատ ի, ի՞նչըխ պիտի դադրի, օր մենքը  
փըսակ էնենք:

ճամխեցին, լաճ, ախչիկ պերին, օր տանին ճըրիւ ափ, փը-  
սակեն:

Պերելու ժամանակ Շահբազ Մելիքը ու Դավոնշ աղեն, օր  
ախչըկե իիտև կան կը գյեն, էկան պատահան: Եփօր տարան ճը-  
րիւ պըռուկ, քահաներյ, վարթապետներ լալիկ, բիռալով կանչե-  
ցին Աստված, թե՝ մե ազատես էսա գանձնի ծեռնեն:

Խարս, փեսեն էճան ճըրիւ մեջ, պաշլայեցին փըսակ էնել,  
ճհկը Աստծու կամքիվ դադրավ: Էնոնց փըսակ էրին:

Շահի ժողովուրք հըմեն զարմացան:

Դավոնշ աղեն ու Շահբազ Մելիքը, օր գացած, պատահած,  
էնոնքյն էլ զարմացան:

Փըսակ պըռծան, ու խարս, փեսեն ճըրիւց տիւս էլան, ճհկը<sup>1</sup>  
ըսկըսեց էրթալ:

Շահ ասաց. - Տիւ ազա՛տ, գացե՛ք դիր, օր կուգեք:

Շահբազ Մելիքը, Դավոնշ աղեն առան ախչիկ, տըղան, պե-  
րին իրենց գյեղ: Տարան Մելիքի տուն:

Դավոնշ աղեն էնու կընգան պատմեց, ասաց. - Թե մեր  
ախչիկ Աղավան օր առավ, գյետի վերեն փըսակեցին, գյետի ճհկը  
դադրավ, ես փափաք եմ, օր ամբոխ տընով տանանքյ խայ:

Կին ասաց. - Օր էնպես ա, ես էլ կուգեմ:

Տընով հըմեն խայացան, Աղավան էլ պերին, ուրենց տըղա  
էրին:

